ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ԱՆՈՒՇ ՍԱՐԳՍՅԱՆ

ԽԱՎԱՐԱՁՈՐԻ ՎԱՆՔԸ

Խավարաձորի վանքը պատմական Արշարունիք գավառի հնագույն վանքերից է: Վանքի պատմական արժեքն այն է, որ Գետարգել Ս. Նշանը երկար ժամանակ այնտեղ է գտնվել: Խավարաձորը նշանավոր է նաեւ որպես Անանիա (Նարեկացի) եւ Պետրոս վարդապետների բնակատեղի:

Խավարաձոր վանքի վերաբերյալ հիշատակություն ունի Սամվել Կամրջաձորեցին, իսկ ձեռագրական աղբյուրներում (Հայսմավուրք, Ճառընտիր, Ժողովածու) Գետարգել Ս. Նշանի մասին բազմիցս հիշատակվող պատմություններից Խավարաձորին վերաբերող միայն երկու տվյալ ենք գտել: Վանքի վերաբերյալ մնացած տեղեկությունները պահպանվել են ուղեգրական գործերում, որոնք հիմնականում նկարագրական բնույթի են:

Վանքի ավերակները մինչեւ այժմ պահպանվել են ներկայիս Թուրքիայի տարածքում: Վանքատեղին հայտնի է Թաշբուրուն (**Taşburun**)՝Քարե քիթ անվանմամբ, սակայն Ղարավանք (Սեւ վանք) [1] նախկին անունը նույնպես գործածական է: Երբեմն կիրառվում է նաեւ Խաչավանք անվանումը:

Խավարաձորի վանքը պատմության մեջ առաջին անգամ հիշատակվում է Ժ. դարի վերջում՝ Սամվել Կամրջաձորեցու «Յաղագս տաւնից տէրունականաց» երկի «Յաղագս Առաջաւոր պահոց» գլխում, որտեղ հեղինակը Առաջավորաց պահքի մասին իր տեսակետը հայտնելով՝ նշում է, որ Անանիա եւ Պետրոս վարդապետներն այդ հարցում իր հետ համակարծիք են, միաժամանակ վերջիններիս մասին փոքրիկ կենսագրական տեղեկություն է հաղորդում «**....յառաջնագոյն յԱնտաք եւ ապա ի Խաւարաձոր եւ յետոյ ի Նարեկ բնակեցան,զնոյն վարդապետէին**»[2]:

Հետագայում՝ 1278 թվականին, Մուղնիում գրված Ճառընտիրում հանդիպում ենք այսպիսի վերնագրի «Պատմութիւն Սուրբ Նշանին գերահռչակ ուխտին Խավարաձորոյ»: Այստեղ մանրամասն պատմվում է Սուրբ Նշանի պատմությունը, եւ թե ինչպես

1 Ղարավանք անվանումը տարբեր հեղինակների կողնից տարբեր կերպ է արտասանվել. հայտնի են վանքի Խարավանք, Քարա վանք, Գարավանք անվանումները:

2 «Մատենագիրք Հայոց», h. Ժ, Անթիլիաս, 2009, էջ 720: Ղեւոնդ Ալիշանը Անտաքը նույնացնում է Հավնունիքի Անդուկ գյուղի հետ, իսկ Միքայել Չամչյանը Անտաք անունը վերագրում է վանքի:

է այն Պետրոս Գետադարձ կաթողիկոսի (1019-1058) հրաշագործությունից հետո վերանվանվել Գետարգել Ս. Նշան[3]: Ապա Գետադարձի մահից հետո հիշատակագիրը վկայում է. «**Ոմանք ի ձեռնասուն աշակերտաց իւրոց առին զԳետարգել սուրբ նշանն եւ գնացին յաշխարհն Արշարունեաց. եւ եկեալ բնակէին ի սուրբ ուխտն որ կոչի Խաւարաձոր.եւ անդ յետ նոցա սպասաւորեալ լինէր Գետարգել սուրբ նշանն այլ յայլմէ ընկալեալ մինչեւ ի բազմերջանիկ ճգնազգեաց հայրն Ատոմ, վասն որոյ համբաւ հաճոյական վարուց նորաբ հասաւ հեռաւորս առ մերձաւորս**»[4]: Այնուհետ նկարագրվում է երկրի ծանր իրավիճակը սելջուկյան տիրապետության տակ: Հիշատակագիրը տիրող իրավիճակը պատկերելիս, նշում է, որ անգամ եկեղեցիներն ու աղոթատներն էին քանդվում սելջուկների կողմից: Գուցե նկարագրվող իրավիճակը համընկնում է Ծառաքարի հայտնի դեպքերին, երբ ամբողջ վանքն ավերվեց եւ բնակչությունը կոտորվեց[5]: Եվ այս պայմաններում Հայր Ատոմը, Ս. Նշանը չվտանգելու համար «.... **երթայր ի գաւառն Շիրակայ ի քաղաքն յԱնի: Եւ անտի ելեալ գնայր ի սուրբ ուխտն որ կոչի Հոռոմոց վանք**»[6]: Այստեղ Սուրբ նշանի զորությամբ նա հրաշք է գործում[7]: Պատմության հեղինակը շարունակում է. «**Եւ ապա յետ այսր սոսկալի սքանչելեացս. ազդ լինէր հաւր Ատոմայ եթէ գաւառն Արշարունեաց գթութիւն գտին առաջի գերչաց իւրեան:Լնոյր զԳետարգել Սուրբ Նշանն եւ գնայր դարձեալ ի սուրբ ուխտն Խավարձորոյ**»[8]: Այս վկայումից պարզվում է, որ Արշարունիքը հատուկ շնորհի է արժանացել մասունքի հրաշագործ զորությամբ եւ այլեւս զերծ է մնացել հալածանքներից: Այսպիսով Ատոմը կրկին վերադառնում է Խավարաձոր եւ, ինչպես ձեռագրում է ասվում՝ «**եւ ժողովէր**

3Խաչի գյուտից հետո հռոմեական Կլավդիոս կայսեր (41-54) կին Պատրոնիկեն քրիստոնեություն է ընդունում եւ այցելում Երուսաղեմ: Այստեղ Քրիստոսի գերագմանում խաչափայտով հրաշագործություն է կատարվում, եւ թագուհին խաչից մի մասնիկ է խնդրում: Մասունքը հետագայում անցնում է Սուրբ Սեղբեստիոսի ձեռքը: Ըստ ավանդության, երբ հայոց Տրդատ թագավորն ու Գրիգոր Լուսավորիչն այցելում են Հռոմ, Սեղբեստիոսը, որպես հարգանքի նշան, Սուրբ Նշանից մի պատառիկ է շնորհում Գրիգորին:Այնուհետ հայտնի չէ, թե Հայաստանում որտեղ է հանգրվանել Ս. Նշանը, միայն գիտենք, որ Ներսես Մեծից սկսած՝ պատկանել է հայոց կաթողիկոսներին: Ս. Նշանին բազում հրաշքներ են վերագրվում, որոնցից առավել հայտնին Պետրոս Գետադարձի ձեռքով կատարված հրաշագործության ավանդապատումն է, ըստ որի՝ 1022 թ. Տրապիզոնում Վասիլ 2-րդ կայսեր ներկայությամբ Ս. Ծննդյան օրը՝ ջրօրհնեքի արարողության ժամանակ, Ս. Նշանի զորությամբ Հայոց Կաթողիկոսը գետը կանգնեցնում է եւ ընթացքը փոխում: Այս պատմությունից հետո Ս. Նշանը վերանվանվում է Գետարգել Ս. Նշան (Մատենադարան, ձեռ. Հ՝ 995, թ. 425ա-455բ, հմմտ. **Արտակ աբեղայ Տիգրանեան**, Խաչվերացի տօնի աւանդութիւները, «Գանձասար», Երեւան, 1996, էջ 110-131):

Գետարգել Ս. Նշանը (ոսկե խաչ) այժմ գտնվում է Էջմիածնում, եւ մյուռոնօրհնության ժամանակ Կաթողիկոսը առաջինը նրանով է օրհնում Ս. Մյուռոնը: Գետարգել Ս. Նշանի տոնը կատարվում է զարնանը՝ Ս. Զատիկի հաջորդ կիրակին:

4 Մատենադարան, ձեռ. Հ՝ 995, թ. 453բ:

5 Ծառաքարը, պատմիչների խոսքով, Արշարունյաց փառավոր վանքերից մեկն էր եւ գտնվում էր Երասխաձորում, որը ԺԲ դարի երրորդ քառորդում Ղարաչա թուրք ամիրայի ձեռքին էր: Վերջինս տարածքը վաճառում է Խրզլ-Ասլանին, որը հալածանքներ է սկսում քրիստոնյաների դեմ՝ անխնա կոտորելով ժողովրդին, ինչպես նաեւ ավերում է Ծառաքարը. (մանրամասն տե՛ս **Ղ. Ալիշան**, Այրարատ,Վենետիկ, 1890, էջ 47) :

6 Մատենադարան, ձեռ. Հ՝ 995, թ. 454ա:

7 Հռոմոսի վանքը խորոնոր մի բլրի վրա էր, եւ Ախուրյան գետը շրջապատում էր այն, ամռան տապին զարշահոտություն էր տարածվում վանքում գետի դանդաղընթացության պատճառով: Եւ հայր Ատոմը Ս. Նշանի զորությամբ ճեղքում է ժայռը, որից հետո գետը փոխում է ուղղությունը՝ վանքը փրկելով զարաշահոտությունից. (մանրամասն տե՛ս **Ղ. Ալիշան,** Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 28-29):

8 Մատենադարան, ձեռ. Հ՝ 995, թ. 455ա:

զցրեալ եղբարսն եւ դարձեալ վերստին նորոգէր զբնակարան Սուրբ Գետարգելին: Եւ ապա հետ այնորիկ երանելի սուրբ հայրն Ատոմ հասեալ ի բարւոք ծերութիւն հանգեաւ խաղաղութեամբ: Եւ դնէր մեծաւ պատուով ի դիրս հարցն ի հիւսիսոյ կողմանէ վանացն յարեւելկոյս: Իսկ Գետարգել Սուրբ Նշանն յիսկզբանց եւ այսր երկրպագեալ եւ պատուեալ սպասաւորի յոմանց ի նոյն մենաստանի մինչեւ առ մեզ»[9]:

Խավարաձորի հաջորդ հիշատակումը ԺՁ դարի մի Ճառընտիրում է՝ կրկին Գետարգել Ս. Նշանի պատմության շրջանակներում, որը գրեթե նույնությամբ կրկնում է նախորդին, սակայն այստեղ վանքին տրվում է «Խորա ձոր» անվանումը եւ միայն վերջում հիշատակագիրը գրում է «**...Իսկ այժմ Խաւարաձորն գեաղ դարձաւ** (նախկինում հիշատակվող Խորա ձորը,-Ա.Ս) **եւ կայ Գետ արգել Սուրբ Նշանն ի Զագավանս յերկիրն Կուտէոց**»[10]:

Սովորաբար Կենաց փայտի ավանդազրույցները պատկանում են վիպական բանահյուսության ժանրին, այդ թվում նաեւ Գետարգել սուրբ նշանի պատմությունը, սակայն խաչամասնիկի պատմության մեզ հետաքրքրող կողմը, այսինքն՝ Խավարաձորի հետ կապվելը, կարծում ենք՝ զերծ է վիպականացումից, քանի որ պատմության մեջ նշված է ստույգ ժամանակ (Պետրոս Գետադարձ մահից հետո խաչամասնիկը Խավարաձոր տարվեց) եւ քաղաքական տվյալ իրավիճակում խաչամասնիկի տեղափոխումն է տրամաբանական թվում: Ինչպես նաեւ մասունքը այս պարագայում կոչված չէր լուծում տալ ինչ-որ հարցի (գուցե սրբավայրի անվանումը ստուգաբանելու կամ կրողի անունով կոչվելու), ինչպես սովորաբար պատահում է: Պարզապես, Գետարգել Ս. Նշանի այնտեղ գտնվելու եւ պահվելու փաստը քիչ է շրջանառվում այն պատճառով, որ վանքի պատմությունն ու անունն է դարերի ընթացքում մոռացության մատնվել եւ անգամ իր հնամենի գոյությամբ կասկածի տեղիք է տալիս, թե որ վանքն է: Եւ միայն հայր Ալիշանն է, որ մեզ վանք տանող ճիշտ ճանապարհն է ցույց տալիս: Տեղեկություններ հաղորդելով Երասխաձորի վանքերից՝ նա Ղարավանքի մասին այսպես է գրում. «**Հուպ ի յիշեալ գիւղդ Ենկիճէ՝ յելից նորին իբրեւ կիսով փարսախաւ հեռի, եւ փարսախաւ Երասխայ՝ կայ միւս գեօղ Գարավանք (Սեւ վանք) անուն, որոյ վերջն ցուցանէ դարձեալ տեղի մի մերձաւոր վանաց, այլ թէ ո՞ր՝ ոչ գիտեմ. բայց կարծեմ զԽաւարաձոր վկայեալ Արշարունիս լինի**»[11]: Այս եւ ուղեգրություններում պահպանված Ղարավանքի տեղադրության վերաբերյալ տեղեկություններից բացի հայտնի են վանքի ավերակները: Վանքը Կաղզվանից հեռու է մոտավորապես 10-13 կմ՝գտնվում է Արաքս գետի հարավակողմյան բարձրադիր լեռան վրա[12]:

---

9 Մատենադարան, ձեռ.Հ^մր 995, թ. 455բ:

10 Մատենադարան, ձեռ. Հ^մր 4505, թ. 70ա:

11 **Ղ. Ալիշան** , Այրարատ, էջ 52: Ալիշանի մոտ հիշատակվող Ենկիճէն Ս. Հայկունու աշխատության մեջ հանդիպում է Ինկլիճէ ձեւով: (**Ս. Հայկունի**, Բագրեւանդ Ջրաբաշխ գավառ, Էջմիածին, 1894, էջ 335):

12 Տեղանքն ավելի լավ պատկերացնելու համար նշենք, որ Վարդիհեր վանքից (Աղ-բուլաղ գագաթի հյուսիս-արեւմուտքում Կապույտ բերդն է, հարավ-արեւմուտքում՝ Կալոյի գյուղը, իսկ հյուսիս- արեւելքում՝ Վարդիհեր վանքը: Վարդիհերը Արաքսի արեւելյան կողմն է ընկնում) ներքեւ հյուսիս-արեւմտյան կողմում Չինամեչ գյուղն է, ապա սրա հյուսիսային կողմում Ինկլիճե նախկին հայկական գյուղն է, որից հետո դեպի արեւելք Ղարավանքն է գտնվում: Չանկլիի վանքը նույնպես մոտ է Ղարավանքին: Տե՛ս նաեւ **Թ.**

Այնուամենայնիվ, հարց է առաջանում. արդյո՞ք նախապես հիշատակվող Ղարավանքը նույն Խավարաձորի վանքն է: Մանավանդ որ ուղեգրություններում նույնպես Ղարավանքի կամ Խաչավանքի հիշատակումներում չի ասվում այս մասին:

Նախ քննության առնենք վանքի Խավարաձոր անունից անցումը Ղարավանք ձեւին: Վանքի «Խավարաձոր» անունը արդեն իսկ բառի ստուգաբանությունից ելնելով, հավանաբար պայմանավորված է աշխարհագրական դիրքով, անգամ կրել է Խորաձոր անունը, ինչպես վերը նշեցինք: Իսկ ինչ վերաբերում է «Ղարավանք» անվանմանը, ապա Հայաստանի այլեւայլ վայրերում հայտնի են Ղարավանք անվամբ սրբավայրեր (Թանահատի վանքը, Թալինի Դաշտադեմ գյուղի մոտի եկեղեցին), որոնք հետագայում են ներմուծվել եւ գործածվել որպես տվյալ վանքի, եկեղեցու անվանում, եւ հիմնականում սրբավայրերերը այդպես կոչելը պայմանավորում են արտաքին տեսքով: Մեր քննության ենթակա վանքի պարագայում նույնպես ուղեգրական մի հիշատակումից պարզվում է, որ եկեղեցիները սեւ քարով են կառուցված, որից առաջացել է վանքի եւ գյուղի Ղարավանք անվանումը[13]: Սակայն ենթադրում ենք, որ վանքի «Ղարավանք» անվանումը առաջացել է «Խավարաձոր» անունից: Բացատրական բառարանում սեւ բառը մեկնաբանվում է նաեւ մութ, խավար, անլույս իմաստով[14], հետեւաբար խավար բառի թարգմանության արդյունքում առաջացել է վանքի «Ղարավանք» անվանումը: Մանավանդ որ Սամվել Կարապետյանի մեզ տրամադրած լուսանկարներից մեկում տեսնում ենք, որ տվյալ եկեղեցին (հավանաբար գլխավոր եկեղեցին է) նարնջագույն քարով է կառուցված, ցավոք, մյուս երկու եկեղեցիների երեսապատման քարերը բացակայում են:

Շարունակելով համեմատության մեջ դնել անվանափոխված վանքի անցյալն ու պայմանական ներկան (ուղեգրությունները նկատի ունենք), տեսնում ենք, որ խաչվում են իրար...: Երեմիա Տեւկանցի ճանապարհորդական գրառումներում պահպանվել է ժողովրդի հիշողությունն այն մասին, որ Ս. Խաչը 400 տարի Խաչավանքում է պահվել[15]: Իսկապես, ժողովրդական այս ավանդությունը որպես մեկնակետ պետք է ընդունել՝ ելնելով վերը նշված ձեռագրական վկայություններից: Հիշյալ տեղեկությունը եւս իրար է հանգուցում վանքի փոխված անունները, իսկ Ղարավանքի հնամենի գոյությունն ինքնին վկայում է այս մասին: Այսպես, Անանիա եւ Պետրոս վարդապետների վերը նշված հատվածից կարելի է եզրակացնել, որ Խավարաձորը Ժ դարում արդեն մենաստան էր: Եւ չնայած այն բանին, որ առայժմ հնարավոր չէ պարզել, թե որ դարում է հիմնադրվել, այնուամենայնիվ, պարզ է, որ Ժ դարից առաջ է, հակառակ դեպքում Ասողիկը, որը քաջատեղյակ էր եկեղեցաշինությունից եւ մանրամասն նկարագրում է, թե որ վանքերն են հիմնադրվել իր ժամանակաշրջանում, ենթադրում ենք, որ Խավարաձորին նույնպես

Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան , Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3 ,Երեւան,1991, էջ 29:

13Տե՛ս **Ե. Տեւկանց,** Ճանապարհորդություն Բարձր Հայք եւ Վասպուրական 1872-1873թթ., Երեւան, 1991, էջ 88:

14 Տե՛ս **Է. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, հ. Երեւան, 1976, էջ 1292:

15 Տե՛ս **Ե. Տեւկանց**, նշվ. աշխ., էջ 88:

կանդրադառնար, մանավանդ որ հիշատակում է Արշարունյաց Կամրջաձոր (938), Կապուտաքար (Ժ դարի կեսերին), Շիրիմ վանքերի (Կարսի Աբաս թագավոր (984-1029) օրոք) կառուցման ժամանակահատվածը, ինչպես նաեւ տեղեկություն է հաղորդում Թռինք եւ Վանգո (Վարդիհեր) վանքերից: Ղարավանքի հնության մասին առավել հետաքրքրական է Ներսես Սարգիսյանի արժեքավոր աշխատության մեջ պահպանված ավանդազրույցը. «**Ասանդեն եթէ Թաթուլ եւ Վարոս յաւուրս կիւրակէից իջեալ ի Վարդիհէրայ աստ (**նկատի ունի Ղարավանք -Ա.Ս.**) պատարագ մատուցանէին եւ նոյն օրին դառնային ի լեառն ի միայնարան իւրեանց**»[16]: Ինչպես հայտնի է, Թաթուլ եւ Վարոս Սրբերը ապրել ու գործել են Ե դարում, իսկ Վարդիհեր (Թաթլո վանք, Վանգո) վանքը հիմնադրել է Թաթուլը Ե դարի վերջում[17]: Իհարկե, ավանդազրույցը պատմական փաստ չէ, սակայն վկայում է վանքի հնության մասին:

Ըստ ուղեգրությունների՝Խավարաձորի վանքը ուշագրավ է հատկապես ճարտարապետական կողմով եւ հնարավորություն է տալիս որոշ եզրահանգումներ կատարել: Նախ նշենք, որ եկեղեցական համալիրը բաղկացած է երեք փոքր կաթողիկե եկեղեցիներից, որոնցից երկուսը կողք կողքի տեղակայված են գյուղի արեւմտյան բարձրադիր դիրքում (այս եկեղեցիներից մեկը ավելի մեծ է մյուս երկուսից եւ այս համեմատաբար մեծ եկեղեցուն անմիջապես կից՝ հյուսիսային կողմում, գտնվում է մյուս եկեղեցին), իսկ երրորդը՝ քարընկեց հեռավորության վրա է՝ գերեզմանատան կենտրոնում: Եկեղեցիները գտնվում են խաչաձեւ բլուրների վրա եւ կարծիք կա, որ այն Խաչավանք անունը ստացել է նաեւ այս պատճառով[18]: Սակայն, ենթադրում ենք, որ մասունքի ձեռքբերմամբ վանքը ստացել է իր երկրորդ անվանումը եւ հետագայում այս անունն ավելի մեծ հեղինակություն է բերել վանքին, որի պատճառով նախկին անունը մոռացվել կամ հետ է մղվել: Պահպանվել են մեկից ավելի ավանդազրույցներ խաչափայտի մասունքի եւ Խաչի անվամբ վանքերը վերակոչելու վերաբերյալ: Խավարաձորի մոտ գտնվող Ս. Խաչ վանքի պատմության հիմքում եւս ընկած է Ս. Խաչի (Նունե Մծխեթացու Ս. Խաչ) ավանդազրույցներից մեկը[19]: Կարինի Խաչեվանքի կամ Խաչկավանքի անունը նույպես կապվում է խաչափայտի հետ[20]: Ելնելով այն իրողությունից, որ գրեթե նույնանուն եկեղեցիների պատմության մեջ առկա է խաչափայտը, հնարավոր ենք համարում, որ Խավարաձոր վանքի Խաչավանք անունը կապվում է խաչափայտի մասունքի հետ: Եւ

16 **Ն. Սարգիսեան**, Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 218:

17 **Գ. Հովսեփյան** , Հիշատակարան ձեռագրաց, Անթիլիաս, 1951, էջ 4, հմմտ. «Ցայսմավուրք», Կ. Պոլիս, 1730, էջ ՂԷ:

18 **Ե. Տեկանց,** նշվ. աշխ., էջ 88:

19 Հիշյալ Ս. Խաչ վանքը գտնվում է Խավարաձորի մոտ՝Սողանլուղի անտառում, Պժնկերտ լեռան գագաթին: Ահարոն Վանանդեցու գրության մեջ պատմվում է, որ Նունեի Ս. Խաչը բերվել է Արշարունիք: Ս. Խաչն իր վերջնական հանգրվանն է գտել հիշյալ վանքում եւ տեղանքն ու վանքը մասունքի անունով Խաչի վանք է կոչվել. (մանրամասն տե՛ս **Գ. Հովսեփյան,** նշվ. աշխ., էջ 10-16):

20 «Ասանդութիւնը կ՝ըսէ թէ Հերակլ կայսրը խաչափայտը Տումլի լերան վրայ պահած տեղէն հանելէն յետոյ, անոր մէկ մասը տուած է ազնուական տիկնոջ մը որ երեք օր ամբողջ զօրքը կերակրած է. եւ այդ տիկինը շինած է մենաստանը. Անոր աւագ խորանին հիման մէջ դնելով իր ստացած խաչափայտին մասը, որով վանքը կոչուած է Խաչեվանք կամ Խաչկավանք» (մանրամասն տե՛ս **Յ. Քօսեան**, Բարձր Հայք, հ. Բ, Վիեննա, 1926, էջ 47-51):

քանի որ հիշատակեցինք Ս. Խաչ անունը կրող այս եկեղեցիները, հարկ ենք համարում նշել, որ աշխարհագրորեն իրար մոտ լինելը, ինչպես նաեւ միեւնույն անունն ու հիշյալ եկեղեցիներում խաչափայտի մասունքների գտնվելը երբեմն շփոթ է առաջացնում, սակայն վերոշարադրյալ տվյալները ընդգծում եւ հստակեցնում են նյութը: Վերադառնալով գերեզմանատանը՝ հավելենք, որ այնտեղ կա եւս մի եկեղեցի, որն արդեն ԺԹ դարի վերջին է կառուցվել[21]: Եւ քանի որ եկեղեցիները կիսավեր են, ապա այս մեկը չպետք է շփոթել մյուս եռյակ եկեղեցիների հետ: Հնաշեն եկեղեցիները, ինչպես նշեցինք, միեւնույն ճարտարապետական հորինվածքն ունեն: Ըստ Տեւկանցի նկարագրության՝ «**Տաճարներ խաչաձեւ են, խաչաձեւ կամարաց վրա բարձրագոյն գմբեթներ ունին, որոնց վեղարներ խոնարհած**»[22]: Եկեղեցիները աչքի են ընկնում նաեւ սրբատաշ քարե հարթ որմնադրությամբ: Դիտարկելով եկեղեցիների հորինվածքն ընդհանուր գծերով եւ ձեռքի տակ չունենելով ավելի մանրակրկիտ տեղեկություններ՝ եկեղեցիները մոտավոր թվագրվում են Ե-Է դարերի կենտրոնագմբեթ փոքր հուշարձանների տիպին[23]. ընդ որում գերեզմանատան եկեղեցին լրիվ հարազատ է այս շարքին, քանի որ վերջինս գտնվում է գերեզմանատան մեջ, եւ մասնագետների կարծիքով, նմանատիպ եկեղեցիները եկեղեցի-դամբարաններ են՝ հիմնականում տոհմական դամբարաններ: Այս տիպի եկեղեցիները կարող էին կանգնեցված լինել նաեւ հասարակաց գերեզմանոցներում՝ որոշակի ծեսերի համար (Բջնիի, Կարմրավորի, Արգնիի Ս. Մարիամ եկեղեցիները, որոնք Ե-Է դարերի կենտրոնագմբեթ հուշարձաններին են պատկանում, եւս գերեզմանատների մեջ են): Գերեզմանատունը նույնպես հին է, որի մասին փաստում է Կյուրեղ Սրապյանը իր ուղեգրական նոթերում՝ հիշատակելով, որ այդտեղ կան նաեւ 1156 թվականի մահարձաններ[24]:

Ո՞վ է կառուցել վանքը կամ ո՞ւմ է նվիրված՝ ոչինչ չունենք ձեռքի տակ, սակայն հայտնի է, որ Արշարունիքը Կամսարականների տոհմական կալվածքն է եղել մինչեւ

21Հուսիկ վարդ. Մովսիսյանը, որն 1889 թ. այցել է Ղարավանք,եկեղեցիների մասին պատմելով, նոր եկեղեցու կառուցումն այսպես է պատճառաբանում «... **է որ քայքայուած, մութ, մռայլ եւ խոնաւ լինելուն համար անյարմար է ժամերգութեան** (վանքը,-Ա.Մ.), **այս իսկ պատճառով ժողովուրդը նոր եկեղեցի է շինել, որ մնում է միայն ծածկել**» (**Հ. Մովսիսյան**, Կարսի վիճակի հնությունների մասին. «Արարատ», Վաղարշապատ,1890, թիվ Ե, էջ 262):

22 **Ե. Տեկանց,** նշվ.աշխ., էջ 88:

23 Վաղ միջնադարյան կենտրոնոգմբեթ փոքր հուշարձանները մանրամասն ուսումնասիրել է Վահագն Գրիգորյանը (**Վ. Գրիգորյան**, Հայաստանի վաղ միջնադարյան կենտրոնագմբեթ փոքր հուշարձանները, Երեւան, 1982): Վերջինս առաջ է քաշում այն տեսակետը, որ Ե դարում արդեն կիրառվում էր ճարտարապետական այս հորինվածքը: Գրիգորյանը դասակարգում է այս տիպի եկեղեցիներն ըստ խորանների (միախորան, քառախորան, եռախորան): Կենտրոնագմբեթ փոքր եկեղեցիների գերակշռող մասը, ընդունված տեսակետի համաձայն, համարվում են աղոթատներ (վկայարաններ, գերեզմանատան եկեղեցիներ, տոհմական եկեղեցի-դամբարաններ, մկրտարաններ). (**Վ. Գրիգորյան**, նշվ. աշխ., էջ 83): Գրիգորյանը հատուկ շեշտում է, որ այս տիպի եկեղեցիները բարձրադիր տեղերում են կառուցվել, ինչը եւ համապատասխանում է քննության ենթակա վանքին:

24Տե՛ս **Կ. Սրապյան**, Ստորագրութիւն Կարսի եւ շրջակայ գիւղօրէից եւ վանօրէից, «Բանբեր Հայաստանի արխիվների», Երեւան, 1970, Հ^{դր} 2, էջ 96: 1878թ. Կարսի մարզը Ռուսաստանին անցնելուց հետո Գեւորգ Դ Կաթողիկոսը տարածաշրջանն ուսումնասիրելու համար Կ. Սրապյանին հատուկ հանձնարարական է տալիս: Վերջինս այցելել է Կարսի շրջան եւ մանրամասն տեղեկություն է հաղորդում պահպանված հնությունների եւ մանցած այլ բաների վերաբերյալ:

Ը դարի վերջը: Բնականաբար, Խավարաձորը պետք է այդ նախարարական տոհմի կողմից հիմնված լիներ: Կամսարականների կողմից են հիմնադրվել նաեւ Մրենը, Երերույքը, ինչպես նաեւ Թալինի Ս. Աստվածածին (Է դար) եկեղեցին: Վերջինս պատկանում է վաղմիջնադարյան կենտրանոգմբեթ փոքր եկեղեցիների եռախորան հուշարձանների տիպին եւ ընդհանրություն ունի Խավարաձորի ճարտարապետության հետ: Ընդ որում՝ Թալինի եկեղեցու հիմնադիր Ներսեհ Կամսարականը հայտնի է որպես եկեղեցիներ կառուցող[25], ինչի մասին վկայում է Ս. Աստվածածին եկեղեցու պատի արձանագրությունը, սակայն մնացած եկեղեցիների մասին, որոնք Ներսեհն է կառուցել, փաստացի ոչինչ չի պահպանվել եւ չի բացառվում, որ Խավարաձորի հիմնարկեքն էլ նրան է պատկանում:

Խավարաձորի սկզբնական նշանակության վերաբերյալ կարելի է միայն ենթադրություններ անել՝ ելնելով ճարտարապետությունից, գտնվելու վայրից, սակայն վանքի առաջին իսկ հիշատակումից պարզ է, որ այն մենաստան էր: Ըստ Սամվել Կամրջաձորեցու՝ Անանիա եւ Պետրոս վարդապետները ինչպես Նարեկում, նույնպես եւ Անտաքում ու Խավարաձորում «վարդապետէին», այսինքն՝ ուսուցչապետեր էին: Աներկբա կարող ենք ասել, որ այնտեղ վարդապետների բնակվելը եւ գործունեություն ծավալելը հնարավոր էր միայն վանք-մենաստանի առկայությամբ: Իսկ Գետարգել Ս. Նշանի պատմության մեջ ասվում է այս մասին, անգամ շեշտվում է Արշարունյաց մենաստաններում մոմավառության թույլտվությունը: Հիշատակված «Արշարունյաց մենաստաններ» ընդհանրության մեջ պետք է ընկալել նաեւ Խավարաձորը, քանի որ հայր Ատոմը միայն այս առանձնաշնորհումներից հետո է Խավարաձոր վերադարձել: Գյուղի տարածքում մինչեւ ԺԹ դարի վերջը պահպանված շինությունների ավերակները, պարիսպների հետքերը, եկեղեցիները եւ գյուղի մոտ գտնվող Ս. Թորոս ուխտատեղին եւս երբեմնի վանական համալիրի վկայությունն են: Անգամ վերը հիշատակված ԺԵ դարի Ճառընտիրում ակնարկվում է, որ հետագայում՝ հավանաբար Ճառընտիրը գրվելու ժամանակ, վանքատեղին բնակեցվել է եւ վերածվել գյուղի[26]: Ուշագրավ է, որ այս հիշողությունը ժողովրդի մեջ էլ պահպանվել է. «**Բնակիչք ասեն, նախ՝ վարդապետաց եւ միաբանաց բնակարան էր եւ զկնի աւերմանց գիւղացոց բանակարան եղել է**»[27]:

Վանքի վերաբերյալ կարեւոր տեղեկություններ են հաղորդվում Գետարգել Ս. Նշանի հիշատակված երկու պատմություններում, որոնց շրջանակներում՝ նաեւ հայր Ատոմի կենսագրությամբ: Ելնելով դեպքերի ընթացքից, նկարագրվող քաղաքական իրավիճակից՝ ենթադրում ենք, որ հայր Ատոմը գործել է ԺԱ դարի վերջում: Նրան ԺԱ դարի անձ է համարում նաեւ Հրաչյա Աճառյանը, սակայն ինչպես ըստ Աճառյանի, այնպես էլ մատենագրության մեջ հիմանականում այն կարծիքն է ձեւավորվել, որ հայր

25 Սոկրատի եկեղեցական պատմության թարգմանիչը Ներսեհ Կամսարականի (688-691թթ. համարվում է Ներսեհի «Հայոց իշխանության» շրջանը) անունն այսպես է անմահացրել «Ով Տէր Ներսեհ Կամսարական, ապիհիւպատ Պատրիկ, որ եկեղեցեաց ես շինող, միշտ խաղաղութիւն կալցիս ի Քրիստոսէ» (**Ս. Կոգեան**, Կամսարականները Տիարք Շիրակայ եւ Արշարունեաց, Վիեննա, 1926, էջ 153):

26 Հիշատակագրի նախադասությունը՝ «իսկ այժմ...» բառերով սկսելը վկայում է, որ Խավարաձորը հետագայում է գյուղ դարձել:

27 **Ե. Տեվանց**, նշվ.աշխ., էջ 88:

Ատոմը Հոռոմոսի վանքի վանահայրն է եղել կամ վանականներից մեկը[28]: Այստեղ հարկ ենք համարում մի ճշգրտում մտցնել. այսպես, Գետարգել Ս. Նշանի բազմիցս հիշատակվող պատմություններում դուրս է թողնվել Ս. Նշանը Խավարաձորում պահվելու հատվածը, եւ Հոռոմոսի վանքում հայր Ատոմի Գետարգել Ս. Նշանով հրաշագործության պատմությունից ստացվում է, որ վերջինս Հոռոմոսի վանքի հոգեւորական է: Սակայն վերը նշված երկու պատմություններից ակնհայտ է, Ատոմը Խավարաձորի վանքի վանահայրն է, քանի որ կարծում ենք վանահորն էր միայն վերապահված Ս. Նշանը տեղից տեղ տանել: Նաեւ ձեռագրի մեջբերված հատվածում ասվում է, որ նա, Հոռոմոսից վերադառնալով, հավաքում է ցրված հոգեւորականներին եւ վանահոր իրավունքով վերաշինում է վանքը եւ ոչ թե կառուցում է նորը: Ինչպես տեսնում ենք, տարածքը ենթարկվել է ավերածությունների, եւ վանքի միաբանները ցրվել են, լքել վանքը: Փաստորեն, վանահոր վերադարձը ոչ միայն մասունքի հետբերման լուրն է ավետում, այլ նաեւ՝ վանքի վերաշինումն ու միաբանության վերականգնումը: Հրաշագործություն կատարելուց զատ՝ հայր Ատոմը վանքին նոր կյանք հաղորդողն է, որոնցով եւ սրբանում է նրա անունը: Ինչպես արդեն նշել ենք, մինչեւ մահ Ատոմն ապրել է վանքում ու թաղվել մերձակայքում:

Պետրոս Գետադարձի մահից հետո Գետարգել Ս. Նշանը Խավարաձոր տանելը, կարծում ենք, պայմանավորված էր նրանով, որ Արշարունիքը Անիին մոտ էր գտնվում եւ հարմար թաքստոց էր: Խավարաձորին մոտ գտնվող Վարդիհեր վանքում էլ, ինչպես վկայում է Ստեփանոս Օրբելյանը, սուրբ մասունքներ են պահվել, եւ պատմիչը մասունքների՝ Վարդիհերում գտնվելը այսպես է բացատրում. «**... ժողովեալ էր անդ վերջի Գագիկ թագաւորն Բագրատունի. եւ եղեալ ի պահեստի ի կործանման ժամանակին**»[29]: Խաչամասնիկի՝ վանքում գտնվելու վերաբերյալ Մուղնիի Ճառընտիրի հիշատակագիրը նշում է, որ մինչեւ 1278 թվականը (այսինքն Ճառընտիրը գրվելու ժամանակ) այն Խավարաձորում է, իսկ Գետարգել Ս. Նշանի մնացած պատմություններում, ներառյալ եւ ԺԵ դարի հիշատակված Ճառընտիրում ասվում է, որ այն Կոտայքի Զագավանքում է պահվել: Ընդ որում՝ Գետարգել Ս. Նշանը այնքան մեծ հռչակ է բերել Զագավանքին, որ այն վիմագրերում եւ ժողովրդի մեջ հիշվում է «Գետարգել Սուրբ Նշան» եւ «Գետադարձի Սուրբ Նշան» անուններով: Սուրբ մասունքի Զագավանք տանելու վերաբերյալ ոչ մի փաստ չի պահպանվել, սակայն Զագավանքի երկհարկանի դամբարան եկեղեցու հարավային պատին արձանագրություն կա այն մասին, որ «**Թվ. ՉԽԲ (1293) կամաւն Աստուծոյ ես Գրիգոր կաթողիկոս ամենայն Հայոց վարդապետօք եւ Փ** (†) **(այսինքն եպիսկոպոսք) շնորհեցաք զԶագ ընծայ Գետարգելայ Սուրբ**

28 «Ատոմ, վանահայր Հոռոմոսի վանից, փոխել է վանքի մոտից անցնող գետի ընթացքը, շինել է Խավարաձոր վանքը, ուր եւ մեռավ ու թաղվեց (ԺԱ դար)» (**Հ. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Երեւան, 1942, էջ 256): Տե՛ս «Յայսմաւուրք», Կ. Պոլիս, 1730, էջ դճը: Հայր Ատոմի վերաբերյալ ճշգրիտ տեղեկություն է հաղորդում Ղ. Ալիշանը՝ հավանաբար ձեռքի տակ ունենալով Մատենադարանի Հ^մր 4505 ձեռագրի նման մի ձեռագիր: (**Ղ. Ալիշան**, Շիրակ,էջ 28-29, **Ղ. Ալիշան**, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 239):

29 **Ստեփանոս Օրբելեան,** Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 415:

Նշանիս, մի՛ ոք իշխեսցէ հակառակել հրամանաց մերոց»[30]: Սա նվիրատվական բնույթի արձանագրություն է այն մասին, որ Գրիգոր Է Անավարազեցի Կաթողիկոսը (1293-1307) որպես ընծա Զագ գյուղը շնորհել է Գետարգել Ս. Նշանին (նկատի ունի վանական միաբանությունը): Սա վկայում է, որ սուրբ մասունքն արդեն Զագավանքում էր կամ հենց այդ ժամանակ է Խավարաձորից տարվել Զագավանք: Փաստորեն, 1278-1293 թթ. ժամանակահատվածում մասունքը տեղափոխվել է Զագավանք կամ, ինչպես արդեն նշեցինք, գուցե եւ 1293-ին: Պարզ չէ, թե ինչով էր պայմանավորված այս տեղափոխությունը, անգամ երկրի քաղաքական կյանքում նկատելի ոչ մի շարժ չկար, որով կարելի էր պատճառաբանել մասունքի տեղափոխումը: Գուցե այս քայլը հենարան գտնելու միտում ուներ, քանի որ Զագավանքը պատկանում էր ժամանակի նշանավոր Զաքարյաններին, իսկ նվիրատվության համար այս վանքն ընտրելը, կարծում ենք, պայմանավորված էր նրանով, որ Զագավանքը ժամանակի նշանավոր վանքերից էր, ինչի մասին վկայում է 1270թ. Զագավանքի հայտնի ժողովը, որտեղ ընդունվել են Սսի ժողովի կանոնները:

1278 թվականից, այսինքն՝ Մուղնիի ճառընտիրը գրվելուց հետո, Խավարաձորի վերաբերյալ գրեթե ոչինչ չի պահպանվել, միայն ուղեգրություններից պարզվում է, որ վանքը ենթարկվել է Շահ Աբասի արշավանքին, որի ժամանակ էլ եղծվել են վանքի արձանագրություններն ու քանդվել գմբեթները[31]: Առաքել Դավրիժեցու Պատմությունից հայտնի է, որ Կաղզվանը ենթարկվել է Շահ Աբասի ավերիչ արշավանքին եւ բնակչության տեղահանման պատճառով տարածքն ամայացել է[32]: Տարածաշրջանը ենթարկվել է նաեւ Թամազդուլի, Նադիր շահի արշավանքներին, որով էլ կարելի է մեկնաբանել վանքի ամայանալն ու խարխլվելը, դրան ավելացրած՝ ԺԹ դարի ռուս-թուրքական պատերազմները:

ԺԹ. դարի ուղեգրական հիշատակումներում (այցելությունները եւ գրառումները հիմնականում կատարվել են 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո) վանքը նկարագրվում է խարխլված, գմբեթները խոնարհված վիճակում, սակայն անգամ այդ վիճակով բոլոր այցելուները հիացել են վանքի հնությամբ ու գեղեցկությամբ: Եւ քանի որ վանքը շարջապատող նույնանուն փոքրիկ գյուղը հայկական էր (ԺԹ. դարի վերջում մոտավոր 20-30 տուն բնակչությամբ), վանքը՝ մինչեւ նոր եկեղեցու կառուցումը (1880-ականների վերջ), ծառայում էր ժողովրդին եւ անգամ քահանա էր սպասավորում վանքում: Խավարաձոր-Ղարավանքը վերջնականապես լքվել է 1920 թվականին, երբ տեղի հայ բնակչությունն արտագաղթել է Արեւելյան Հայաստան:

Խավարաձորը ամայացել, մոռացվել, գրեթե հողին է հավասարվել, սակայն վանքի պատմությունը այն հավերժական լույսն է, որ կենդանություն է շնորհում անգամ ավերակներին:

---

30 **Մ. Սմբատեանց**, Տեղեկագիր Գեղարքունի Ծովազարդ գաւառի, որ այժմ Նոր-Բայազէտ գաւառ, Վաղարշապատ, 1895, էջ 245:

31 Տե՛ս **Ե. Տեւկանց**, նշվ. աշխ., էջ 88:

32 Տե՛ս **Առաքել Դավրիժեցի**, Պատմություն, Երեւան, 1988, էջ 40, 52: